

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՔԱՆԻ ՍԸ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ՏԵՊԼԻՆԻ ՍԸՐ ԶԵՍԻՐ ՊԻՊԻԻ ԶԱԿԱՔԱՅՈՅԵՆ

«ՍԻՄԼՆ»ի անցեալ թիւերուն մէջ տուած էի յիշատակարաններ և ծանօթութիւններ Սըր Զէսիր Պիպիի ձեռագրաց հաւաքածոյին հայերէն ձեռագիրներու մասին: Այս անգամ կը վերջացնեմ ինչ որ ձեռք բերած էի իմ այցելութիւններու ընթացքին:

ԹԻԻ 551

ՀԱՄԱՌՈՏ ԱՍՏՈՒԱԾԱՆՈՒՆԶ

1601

Մագաղաթ, բալորգիր, մանրանկարեալ: Թերթ 37:

Գլխաւոր յիշատակարան. «Փառք...դաստուածաշունչ պատմութեանց ժողովս. թէպէտ ոչ եմք տեղեակ թէ յուժմէ իմաստութիւնս, այլ տեսողքս՝ զուարճանն ի բան իմաստութեանս: Յորոց լուսափայլ բանից և յարմատոց...: Երբանիկ և երիցս երանեալ բարունապետն Սրապիոն Եղեռնացին: Զոր տեսեալ զիմաստաշար... և ետ գրել զսա՝ ոսկենկար զարդիւք ի վայելումն անձին իւրոյ սրբասէրի... և հոգւոյ յիշատակ, և ծնողաց իւրոց հօրն խոճայ Դանիէլի: և նախնեացն իւր, խոճայ Ոսկեմանին, և որդւոյ նորա Վարդանին, որդւոյ նորա Փրիւնանին, որդւոյ նորա խոճայ Դանիէլին որ է հայր Սրապիոն վարդապետին, և մօր իւրոյ մահգասի Աթլասին, և մեծ մօրն մահգասի Ունդուտին: Եւ հօր եղբարցն իւր Սքանդարին, մղտեսի Ղազարին, Դաւթին, և հօրքրւորցն իւր Սառային. և մղտեսի Սուլթանին: Եւ դարձեալ Սրապիոն վարդապետին հօրն իւրոյ խոճայ Դանիէլին, և մօրն մահգասի Աթլասին: Եւ եղբարցն ի քրիստոս զնազնիւրցն, Պուտավերտի սարկաւազին, Գասպար սարկաւազին, Գաղտասար սարկաւազին: Եւ մահգասի խոճայ Յակոբին, որ յաւուրս յայս փոխեցաւ ի քրիստոս որ էր այր երեւելի, աղքատասէր և ողորմած: ... Եւ քրւորցըն իւր, մղտեսի Մարիամին, Վարդ խաթունին, Տունեային, Մերտինին, Եղիսարեթին: Եւ եղբոր որդոցն իւր Փրիւնանին, Յուսուֆին, Դանիէլին, Գասպարին, Յովանիսին, Դաւթին, Հռիփսիմին, Պանդուտին, Ալիսին...: Արդ զրեցաւ և ծաղկեցաւ ոսկենկար մատենան, որ կոչի Համոստ աստուածաշունչ ի Հայկազեան Թուականիս. ՌԾ (1601). ամին, ի մարտաշաղաքս Համիթ. ի դուռն սուրբ Սարգսի զօրավարին որոյ ընդհովանեալ պարփակեմք. ի վերադիտողութեան մերոյ նահանգի Տիգրանակերտի, սորան ստացողի Սրապիոն վարդապետի: Զեռամբ յոքնամեղ և զառածեալ անձին սուտ և փուտ գրչի Յովանիսի, և աշխատողի ընդ իս, Ասլան՝ պատանեկի. ի գրել՝ և ի ծաղկեցն սա՝ և յայլ գրեանս. զի էր լի շնորհք յամենայն գործս իւր: Եւ զգրոյս շատն նա գրեաց: Այլամ կը մեռնի չորս օրուամ մէջ 20 տարեկամ հասակին: Յաւալի է որ յիշատակարանը ամբողջութեամբ չեմ արտագրեր:

Օր. Սիւրաբիի Տէր Ներսէսեան խօսելով այս ձեռագրին մասին իր

պատրաստած անգլիերէն ցուցակին մէջ կը գրէ: (էջ 5) . «Արքայիս Եդեսացի,
Հեղինակը այս Համառոտ Աստուածաշունչին որ Յոյն ժամանակ տէրն է այս
ձեռագրին» . (*Serapion of Edessa, the author of this Abridged Bible who is at the
same time the owner of this manuscript*) . Սակայն յիշատակարանին սկիզբն իսկ
կ'ըսուի թէ Աստուածաշունչի այս համառոտագրութեան հեղինակը *Ժանօթ չէ*
(«գաստուածաշունչը պատմութեանց ժողովս, Բէպեա ոչ նմա տեղեակ թէ յում-
մէ իմաստութիւնս») :

ԹԻԻ 581

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

1668

Մեծագոյն մասամբ քղթեայ, բոլորգիր, ընտիր արծաթակազմ այս Ա-
ւետարանը գրուած է «ի մայրաքաղաքն Տիգրանակերտ, ի Թայկանին Հայոց .
ՌՃԺԷ(1668) . . . ինծ յետնելոյս բանասիրաց Ոնովորիտ Եպիսկոպոսի և վարդա-
պետի առաջնորդի Տիգրանակերտոյ . . . » : Հաս կը յիշեմ որովհետև էջմիածնայ
Եփրեմ կաթողիկոսը կը նուիրէ Սրբ Կօր Ոսբլէշի՝ Անգլիոյ դեսպան առ Պար-
սից Ֆաղայի Շահ, երբ աճ իր վերադարձի Յամբուն վրայ, իր ընտանեօք, կը
հանդիպի էջմիածին, Յունիս 4, 1814ին :

ԹԻԻ 599

Ճ Ա Շ Ո Ց

1414

Քղթեայ, բոլորգիր: Յիշատակարանը մասամբ: «Թոզնոմեղ և անար-
ժան գրչի Թովսէփ անուն կրտսնաւորի ի խնդրո սրբաւէր և սրբահոգի կարա-
պետի և Ստեփանոսի: Ի Թվին ՊԿԳ(1414), ի Հայկազան սեռիս տումարի ի Հայ-
րապետութեան տեառն Յակոբայ, ի Թագաւորութեան Հայոց աղլիս որ այլ
չերելին ի դառն և ի նեղ ժամանակիս որ Հարկապահանջութիւն դՀայք տապա-
լնցին: և մեք կանք Հայածական»: Ունի շահեկամ լուսամցագարդեր Հայ մեմ-
բանկարչութեան համար :

Յիշատակարանը ամգամ մը ևս կը հաստատէ որ Յակոբ կաթողիկոս,
որ Սսնցի կոչուածն է, ապրած է մինչև 1414: Պէտք է մերժել ցարդ ընդուն-
ուած և Օրմանեանէ ալ նուիրագործուած 1411 քուակամը Յակոբ Սսնցիի քու-
նաւորմամբ զաւանդուելուն: Նրեանի թիւ 3876ի յիշատակարանն ալ գրուած
«Թուակնութեանս Հայոց ՊԿԳ(1414) . . . ի հայրապետութեան տեառն Յակո-
բայ» կը յիշէ: Այսպէսով կարելի կ'ըլլայ պարզել ամբողջութիւնը Յակոբ Սը-
սնցիի կաթողիկոսական ժամանակաշրջանին և նշանակել 1404էն 1414 . իրմէ
վերջ Գրիգոր համնոդատ կաթողիկոս եղաւ սակայն դժբախտաբար որոշ չէ թէ
երբ: Մամօք յիշատակարաններ 1414էն վերջ մինչև 1417 չեն յիշեր: 1417ին կը
յիշուի «ի կաթողիկոսութիւն Սըսայ Գրիգորի» որ համնոդատ կոչուածն է:

ԹԻԻ 600

Ճ Ա Շ Ո Ց

1446

Թուղթ, բոլորգիր: Գլխաւոր յիշատակարան: «Փառք . . . Տէր Կարա-
պետ կաթողիկոս ամենայն Հայոց, որ և փառաց արժանաւոր գըտեալ և անուն
բարի աստուծոյ և զործս Հրաշանս կատարեալ: Որով աստուածահայր փառա-

ւորեալ, և ըզթաղ արքայական սուրբ արփիւսուրչին մերոյ ի դուռն եղեալ և հրաշլի պատուով պրասկեալ և յաջորդ սուրբ Լուսաւորչին յաթոռ հաստատեալ, և վերբարտին կրկին նորոգեալ զաթոռ մայրաքաղաքիս Կիլիկիոյ, և զհետ հետոց նախնեաց ընթացեալ, մաքրագարդ այցելուս և պատրիարդ առաքելաշնորհ սուրբ աթոռոյս հաստատեալ ի յաստուածաբնակ ուխտս Տէր Պաւղոսի որ կացի Հարաւակողմն քաղաքիս Սըսոյ՝ ընդ Հովանեաւ Վանկոյ սուրբ Նշանիս և սուրբ Աջոյն Գրիգորի մեր Լուսաւորչին և մարն տիրամար Աստուածածրնին Աննայի, յորոց անուն կառուցեալ կայ սուրբ եկեղեցի: Զոր նախնեացն Հետեոյ գտեալ մեծ պա(տ)րիարզն Տէր Կարապետ, Հանճարեղ և կորովամիտ, քաջ Հռետոր և վարդապետ աստուածաբանական անտարակոյս գիտող և խնդրող մեկնաւղ Հին և նոր աստուածաշունչ կաակարանաց, մանաւանդ առնող ուսուցող, տեսաճ իւրում նրմանելով և զարմաթ ի Հոգւոյ սեղանս արկանելով: Սա աստուածաբեալ այրս Տէր Կարապետ կաթողիկոս ք վերայ իւր անբաւ բարեացն և անժողանայի յիշատակացն, մանաւանդ տանն աստուծոյ, և նորին սպասուցն զարդարմանց ստացաւ զսուրբ մատենան աստուածային որ տարեգիրք կոչի յիշատակ իւր և ծնաւդաց իւրոց (տող մը պարապ) և եղբարն պարոն Առաքելին, և եղբար որդոցն Տէր Գրիգորին, և ամենայն արեան մերձաւորաց իւրոց: Արդ այս երջանիկ հայրապետս Տէր Կարապետ կաթողիկոս եկեալ ի Թրիւսթոյն և վերբարտին հաստատեաց զսուրբ աթոռ Լուսաւորչիս ի մայրաքաղաքս Կիլիկիոյ գոր Ե(Ճ) ամ խաբանեալ մնաց՝ վասն անյայտ լինելոյ սուրբ Աջին մերոյ Լուսաւորչին: Եւ յետոյ դեալ նորոգեաց զսուրբ աթոռս: Եւ եկաւ զնաց յերուսաղէմ և երկրպագեաց սուրբ տեղեաց անուրինականաց քրիստոսի, և տեսեալ զամենայն պակասութիւն Հայոց վանացն սրբոյն Յակովբայ՝ զի յայնմ ժամանակի եկեղեցին Հայոց սուրբ Յակոբ ի ներքե պարտուց անկեալ կայր՝ և խաչ աւետարան, և շուրջառ ի ձեռս ալյազղեաց յաւանդ կային: Եւ անտի եկեալ Տէր Կարապետ կաթողիկոսն գնացեալ էջ յեղիպոտոս առ սուլթան Դահիրն. և մեծարեալ պատուեցաւ ի նմանէ՝ և առեալ իւրյայս մեծագինս, և պարգևս մեծամեծս՝ որպէս աւրին է թագաւորաց՝ առաւ պարգևս մեծամեծաց՝ ըստ արժանեացոյ: Եւ եկեալ կրրիին յերուսաղէմ և ազատեաց դեկեղեցին ի պարտուց՝ և զարուծիւնն ի յանարկեաց: Եւ անտի եկեալ սեպահականեաց զսուրբ աթոռս Կիլիկեցւոց, ի սուրբ ուխտս Տէր Պողոսի գոր տէր աստուած վայելի տացէ նրմա զաթոռ և զաստուածաշունչ՝ զիրքս, և անջնջելի յիշատակ պահեսցէ նմա և ծնողաց իւրոց (պարապ տող մը) և եղբարն ստաքելի և եղբար որդւոյն Տէր Գրիգորի ամէն:

Արդ՝ զրեցաւ սուրբ մատենան աստուածային ձեռամբ գրչի Մինաս սարկաւադի ի յերկիրն Արապկերոյ ի մեծ հռչակաւոր ուխտն Փրկչին... ի Թրակականութեանս Հայկազան տումարի. 976(1446). ամի. ի հայրապետութեան Կիլիկեցւոց Տէր Կարապետի, և ի Թագաւորութեան Եղիպոտոսի սուլթան Դահիրի՝ ազգին մահմետականի...:

...զՄինաս սարկաւադ գծող զորոց և զծնաւոյսն իւր զՍուրբան և զՍէր խաթուն, և զեղբարն զԿուրապտին, և զՅովանէս՝ զՅահանես. և զՇահրիարն, 1 զգորն զԹանպաղիգն, և զամենայն արեան մերձաւորսն ամէն:

Արդ՝ ես Գրիգոր եպիսկոպոս Հարսընքէֆոյ՝ ետու զգրել զգիրքս քրեւորդոյն իմոյ՝ Մինաս սարկաւադին և ծաղկեցի և կապեցի ձեռամբ իմով և ետու Տէր Կարապետ կաթողիկոսին:

Զաշոցս մայիսեալս մաս կը կազմէր Անտոնեան միաբանութեան հաւաքածոյն: Լուսն հաշիկեան իր Յիշատակարաններուն շարքին (1446) պակասաւոր և ետ ու առաջ հրատարակած է յիշատակարանէն մասեր:

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ